

## Ամենափոքր ընդհանուր բազմապատիկ

1-ին տողում գրենք 4-ի բազմապատիկները,

իսկ 2-րդ տողում գրենք 10-ի բազմապատիկները

4-4,8,12,16,20,24,28,32,36,40,...

10-10,20,30,40,50,60,...

20 և 40-ը 4-ի և 10-ի ընդհանուր բազմապատիկներ են, 20-ը այդ թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկն է:

Այն բնական թիվը, որը տրված բնական թվերից յուրաքանչյուրի բազմապատիկ է, կոչվում է այդ թվերի ընդհանուր բազմապատիկ:

Տրված բնական թվերի ընդհանուր բազմապատիկներից ամենափոքրը կոչվում է այդ թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկ:

Երկու բնական թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը նշանակելու համար օգտագործում ենք քառակուսի փակագծեր՝ [ ]:

Գրում ենք այսպես՝  $[4,10]=20$

Առաջադրանքներ

Գտեք տրված թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

- 6 և 7
- 5 և 11
- 4 և 7
- 12 և 8
- 24 և 6
- 18 և 6
- 24 և 8

- 25 ÷ 50
- 5 ÷ 12
- 14 ÷ 49
- 12 ÷ 36
- 15 ÷ 12
- 250 ÷ 50
- 70 ÷ 28
- 25 ÷ 5
- 240 ÷ 60
- 16 ÷ 32
- 10 ÷ 8
- 15 ÷ 40
- 100 ÷ 20